

Lignages d'Outremer / Introduction, notes et edition critiques par Marie-Adelaide Nielsen. Paris 2003, p. 254 (Documents relatifs à l'Histoire des Croisades publiés par L'Academie des Inscriptions et Belles-Lettres. XVIII).

Անդրժողովյան ազգատուններ, Առաջաբանը, ծանոթագրությունները և բնագրերը գլխավորում են հրատարակությունները Մարի-Ադելաիդ Նիելինի, *Փարիզ, 2003, 254 էջ (Խաչակրաց պատմությանն առնչվող վավերագրերը հրատարակված արձանագրությունների և դասական բանասիրության կաճառի կողմից. ԺԸ)*:

Մարի-Ադելաիդ Նիելինի կողմից մեկ գրքի մեջ հավաքվել են խաչակրաց պետությունների իշխողների, այսինքն անդրժողովյան ազգատոհմների սերունդների հաջորդականությունը, որոնց մեկ խմբագրությունը, իբրև իրավական հուշարձանի հատված, մասամբ սուղազրկվել է դեռևս XIX դ. առաջին կեսին (1843) «Խաչակրաց պատմիչների հավաքածու» (Recueil des historiens des croisades) «Իրավունքի» (Lois) հատորում: Այն մաս է կազմում Երուսաղեմի Ասիզներում (Assises de la haute cour) հրատարակված «Հովհաննես Իբելինի գրքի» (Livres de Jean d'Helin): Հիշատակված բնագրերը համապատասխան ուղղորդության չի սրժանացել պատմաբանների և հասարակագետների կողմից, քանի որ հետազոտողները չեն տեսել կապը ազգատոհմական այդ ցանկերի և Երուսաղեմի Ասիզների միջև:

Բնագրագետ-վավերագրագետ Մ.-Ա. Նիելինն իր գրքի սկզբում շնորհակալություն է հայտնում նրանց, ովքեր օգնել և իրախուսել են նրան հրատարակելու ներկա աշխատությունը: Այդ անունների մեջ նա առանձնացրել է իր գիտական ատենախոսության ղեկավար Ժան Բեշարին և խորհրդատու կրոնական Կլեմենտին, որոնք օգնել են իրեն կողմնորոշվելու խաչակրաց պատմության կենտրոնում և իրեն հետաքրքրող բնագրերի միջնադարյան ընդօրինակությունների հորձանուտում: Հեղինակը շնորհակալություն է հղում նաև Կլիկա ընկերությունից նախագահ Կլոդ Մուլթայանին, որի օգնությամբ կարողացել է հասնել իրեն միջնադարյան հայ մատենագրության մեջ պահպանված երկերի ժամանակակից ֆրանսերեն թարգմանությունը:

Գրքի ձեռագիր տարբերակն ընթերցելու և արժեքավոր խորհուրդների համար հիշատակվում են նաև Ժակ Պավլոյի (Փարիզ XII), Ֆրանսուազ Սիմերայի (Ֆրանսիայի ազգային գրադարան), Անն Գրոնդոյի (Ազգային գիտական հետազոտությունների կենտրոն), Վերմանացի հետազոտող Հանս Մեյերի և անգլիացի Պետեր Եյբլերի տեսությունները: Հեղինակն իր շնորհակալություն է հայտնում նաև հարազատներին՝ իրեն սատար կանգնելու համար, գիրքն էլ նվիրում է իր ընտանիքի անդամներին:

Նախաբանում, որի հեղինակը Ինստիտուտ-կաճառի անդամ Ժան Բեշարն է, պատմական ակնարկով անդրադառնում է «Խաչակրաց պատմիչներ» շարքի իրավունքի երկու հատորների հրատարակության պատրաստման գովաբանություններին և հետագայում այդ գրքերի հետազոտության բնագավառում գիտության ձեռքբերումներին, ցույց է տալիս, որ հետազոտողները (Բ. Գերար, Ա. Բոյնո, Մ. Գրանդկլոդ, Ժ. Բեկուրա, Ժ. Պրուվեր, Մ. Գրայլսամեր, Պ. Էդբլոյի) սկսած 1815 թ. բազմիցս անդրադարձել են Երուսաղեմի Ասիզների ձեռագրերին և դրանց խմբագրություններին, սակայն համապատասխան ուղղորդություն չեն հատկացրել այդ ժողովածուի մեջ պահպանված խաչակրաց Արևելքի ազգաբանական ցանկերին, համարելով այն պակաս ուղարկվել և անհամապատասխան իրավական ժողովածուի բնույթին: Այս առումով է Ժան Բեշարն արժևորում տիկին Նիելինի հրատարակությունը, ուր առաջին անգամ ցույց է տրվում այն միջավայրը, որտեղ ստեղծվել են Երուսաղեմի Ասիզները: Աշխատանքի առավելություններից մեկն էլ այն է, որ հեղինակը կարողացել է նաև գա-

նազանել այդ ցանկերի տարբեր խմբագրությունները, գտնել այլալեզու տարբերակներ և իրար կողք հրապարակելով ընթերցողին է ներկայացրել Մերձավոր Արևելքի խաչակրաց արքունիքների ողջ բազմազանությունը, հատկապես շեշտելով այդ բնագրերի միջ հայկերենով պահպանված երկր կարևորությունը, որը, անկասկած, հարստացնում է հատորը: Վ. Ռեշարը հատկապես արժևորում է արևելյան Նիելիների ստեղծած մանրամասն անվանացանկերը, ուր ընդգրկված են մինչ այս անհայտ ավատատերերի և ասպետների անունները, տեղանունները: Սրանով է, որ համակարգվում են մեր իմացությունները խաչակրաց Արևելքի տիրապետող դասակարգի մասին և բանալի դառնում բազմաթիվ միջնադարյան բնադրերի և վավերագրերի ընկալման համար:

Մ. - Ա. Նիելիների գիրքը բաղկացած է առաջաբանից, հրատարակության սկզբունքների պարզաբանումից, բնագրերից, օգտագործված գրականության և անվանացանկերից: Առաջաբանը վերնագրված է «Երուսաղեմի Ասիզներին անծանոթ մի գիրք. Անդրծովյան ազգատոհմեր» (Un livre méconnu des Assises de Jerusalem: Les lignages d'Outremer): Այս հատվածի սկզբում հեղինակն անդրադառնում է Երուսաղեմի Ասիզների ստեղծման պատմությանը, բովանդակությանը և դրա մեջ ընդգրկված դրբերին, որոնք վերջնական ասքի են բերվել XIII դ. երկրորդ կեսին Կիպրոսում (դրանք մեզ են հասել հիմնականում լատիներեն և հին ֆրանսերեն լեզուներով): Հեղինակն անդրադառնում է նաև իրեն հետաքրքրող իրավաբանական երկի առանձնահատուկ խմբագրություններին իտալերեն (Թարգմ. Ֆլորիո Բուստրոն, XV դ.), հունարեն (Պեկեպոնեսյան Ասիզներ, XIII դ.), հայերեն (Անտիոքի Ասիզներ, Թարգմ. Սմբատ Գունդստաբլ)¹ միջնադարյան թարգմանություններին և դրանց հետազոտման մակարդակին (էջ 11-14): Հեղինակն իր ասելիքը սեփական է Երուսաղեմի Ասիզների մաս

կազմող խաչակրաց պետությունների արքունիքների գավազանագրքերի բնագրերի հրատարակություններին և հետազոտությունների պատմությանը (էջ 14-20), հիշատակելով, որ միայն Վատիկանի №7806 A ձեռագրում և հայ մատենագրության մեջ է այն առանձնացվել իրավաբանական Մայրերկից (էջ 19): Այնուհետև արևելյան Նիելիներ քննում է այդ ցանկերի հեղինակի հարցը, ուր հետազոտողը ենթադրում է, որ դրանց հնագույն խմբագրությունը կազմված է 1265 – 1270 թթ. միջև և բազմաթիվ թելեբրով կապված է Երուսաղեմի Ասիզների մաս կազմող Հովհաննես Իբելինի իրավաբանական ժողովածուի հետ, որի ստեղծման միջավայրի (Իբելին բնաբնիկ հետնորդների մի քանի սերնդի) հետ էլ կապվում է դրա ստեղծումը (էջ 20-25): Հովհաննես Իբելինին էլ արևելյան Նիելիներ համարում է Ազգաբանական ցանկերի հեղինակ:

Սկզբնաբանում բնագրի խմբագրություններն ունեն թե՛ քանակով և թե՛ բովանդակությամբ միմյանցից տարբերվող զլխաբաժանումներ, երբեմն էլ նույն թագավորական կամ իշխանական ընտանիքի մասին պատմող հատվածը հիմնովին տարբերվում է մյուս տարբերակներից տեղեկությունների ծավալով և բովանդակությամբ: Սակայն մի բան ընդհանուր է, այս բոլոր խմբագրություններում տրվում են խաչակրաց Արևելքի թագավորական (Երուսաղեմ, Կիպրոս, Կիլիկյան Հայաստան) և իշխանական (Անտիոք, Եգիպտոս, Տրիպոլի, Սիրոն, Պալեստինյան Կեսարիա) ընտանիքների ազգակցական ծառերը, ընտանիքի անդամների, նրանց փեսաների ու հարսների գրեթե լիակատար հիշատակումով: Այս հանգամանքն էլ ցույց է տալիս, որ մեզ հետաքրքրող ցանկերը կազմվել են գրավոր (նոտարական վավերագրեր, դատական արձանագրություններ, պատմական երկեր) և բանավոր (ընտանիկան ավանդություններ, հրաշապատում զրույցներ) սկզբնաղբյուրների համակցությամբ: Երկր տարբեր խմբագրությունները շուրջ երեք հարյուր հիսուն տարվա ընթացքում (1099-1459) մատնացույց են անում շուրջ 1000 անձնավորություն, որոնց անունները գանազան ձևերով են վկայված յուրաքանչյուր տարբերակում, որոնք տիկին Նիելիներ ծանոթագրություններում և ցանկերում փորձել

¹ Այստեղ, իհարկե, պետք է նկատի ունենալ, որ Անտիոքի Ասիզների բնագիրն ուղղակիորեն չի սերում Երուսաղեմի Ասիզներից: Անտիոքի Ասիզների ինքնատիպության աղբյուրը, մեր կարծիքով, նորմանական իրավունքի սկզբունքներն են, որ դրված են այդ հուշարձանի հիմքում:

է միասնական տեսքի բերել: Հեղինակը դժվարություններ առաջ է կանգնել այն գեղեցիկում, երբ հիշատակվել են մինչ այս վավերագրերում և գրականության մեջ չհիշատակված գործիչներ, մասնավաճառ, երբ խոսքը վերաբերում է ոչ հայտնի ընտանիքներին (Կեյմոն, Բուֆլը, Պեզո, Բուսալլին և այլ) հետաճանաչողական կապերին (էջ 25-30): Համախոս հարկ է եղել պարզել, թե ավալ ընտանիքի անդամը ի՞նչ ծագում ունի և ե՞րբ է հայտնվել խաչակրաց Արևելքում:

Իր աշխատանքի հաջորդ մասում տիկին Նիելինն անգրագառնում է իրեն հետաքրքրող ընագրի տարբերակներին, վերջում է պարզել երկի ժանրային պատկանելությունը (էջ 32-40): Երկի առաջին խմբագրությունը, որի հնագույն վեճեփոխյան ձևագրերը հեղինակը թվագրում է XIII դ. 60-70-ական թվականներով, և երկրորդ (հնագույններին են Վատիկանի լատիներեն և իտալերեն ու Երևանի հայերեն մատյանները) տարբերակի միջև կա շուրջ 50 տարվա ընդմիջում: Ի տարբերություն լատինալեզու տարբերակների, պահպանված հայերեն բնագրի հեղինակը Հեթում I թագավորի զարմիկ, Կուսիկոսի իշխան Հեթումն է, որի հորաքույր Մարին Հովհաննես Իրեկինի կինն է եղել (էջ 35): Այս տարբերակի ստեղծման տարիքը կա հասակ է 1296 - 1306 թթ. միջև, քանի որ, ըստ տիկին Նիելինի, Հեթումն այն կազմել է իր իսկ շարագրած ժամանակագրությունից² անմիջապես հետո, հայկական միջավայրի կարիքների համար և չի հիշատակել ոչ Լևոն III-ի թագադրումը³, ոչ էլ 1307 թ. սպանությունը:

նր: Հեղինակն իր երկի մեջ ընդգրկում է Կիլիկյան Հայաստանի, Երուսաղեմի, Կիպրոսի թագավորական ընտանիքների և Անտիոքի իշխանության ազգաբանական ծագումը, որոնցից հրուսաղեմակյացության ցանկերը շատ են մոտենում Վատիկանի №4789-ի հին ֆրանսերեն տարբերակին: Անտիոքյան հատվածում կան որոշակի նորություններ, իսկ կիլիկյան մասնամբողջովին ինքնուրույն է և ավելի շատ նմանվում է ժամանակագրության (էջ 37-38): Ավելի պակաս հետաքրքրություն է ներկայացնում Ազգաբանական ցանկերի երրորդ տարբերակը, որի հնագույն կրոն է մյուս խեչյան ձևագրերը, որն ընդգրկում է 1458-1460 թթ. միջև 1344-1358 թթ. գրված մի մատյանից, որը սերի է XIV դ. սկզբի կիպրոսյան մի աղնավաճառի խաչիչին կամ ֆրանսերեն ընդգրկնակա.թյունից (էջ 38): Այս հեղինակը նկարագրում է ընագրի անցած ճանապարհը, Հովհաննես Իրեկինի ժողովածու (1260-1270-ականներ), 1305 թ. ամբողջական ժողովածու, մասնակի հայերեն թարգմանություն (1306)⁴, Պոլ Կաստրոսիոյի (1344) տարբերակը, Պիեռ Ֆլորիի (1398) խմբագրությունը, 1459 թ. Սիմոն Երուսաղեմացու ընդարձակումը:

Աշխատանքի վերջին հատվածում հեղինակը նկարագրել է իրեն հետաքրքրող բնագրերը պարունակող բոլոր ձևագրերը (էջ 41-51): Հետևելով Մ. Գրանդելյուի հետազոտությանը⁵, Մ. - Ա. Նիելինը ներկայացնում է Փարիզի ազգային գրադարանի №19026, Վենետիկի Մարկոսյան գրադարանի ֆրանսերեն ֆոնդի հավելված №20/265, Վատիկանի գրադարանի լատ. №4789, Մունխենի քաղաքային գրադարանի գալլիկան №771, Կարպինտորասի քաղաքային գրադարանի №1789, Փարիզի Աղ-

² Այս ժամանակագրության կրճատ տարբերակը և «Ազգաբանությունը» վերջին անգամ հրատարակել է Վազգեն Հակոբյանը (Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, հ. II, Երևան, 1956, էջ 33-93, էջ 94-111): Ժամանակագրության անբողջական ընդգրկում և ազգաբանական ցանկերի հայերեն տարբերակը վերստին հրատարակության ենթապատրաստում, զուգահեռ ֆրանսերեն թարգմանությունը: Մեր առումագրած այս անտիպ նյութերն էլ իր գրքում օգտագործել է տիկին Մարին Ազգլին Նիելինը՝ շնորհակալություն հայտնելով Կրոջ Մուսթաֆային և նրա «Կիլիկիա» քննությունը (էջ 6) ու ֆրանսերենի թարգմանիչ Համիկ Մկրտչյանին (էջ 131, ծանոթագրություն):

³ Պեսք է ճշանկ, որ Լևոն III թագադրվել է 1306 թ. հուլիսի 30-ին (տե՛ս W. H. R u d d - C o l l e n b e r g, The Rupenides, Hetumides

and Lusignans: The structure of the Armeno-Cilician Dynasties. Paris, 1963, p. 74, n.177):

⁴ Մեր կարծիքով, հայերեն բնագրերն ավելի վաղ է ձևավորվել, բանն որ գրա ընդամենիով յուրահասակություններ առկա են Վահրամ Բարուռ «Պատմութիւն Ռուբինեանց» երկում (տե՛ս Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II (կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 96-97):

⁵ Հմտա. M. G r a n d e l a u d e, Classement sommaire des manuscrits des principaux livres des Assises de Jerusalem. — "Revue historique de droit français et étranger" 5. 1926, p. 418-475, ն ու յ ն ի' Etude critique sur les livres des Assises de Jerusalem. Paris, 1923.

գտյին զրադարանի Դուպուլի ֆոնդ № 652, Փարիզի ազգային գրադարանի ֆրանսիական ֆոնդի № 1078, 1077, և 12206, Փարիզի Ս. Ժենեվիկի զրադարանի № 778, Թրուայի քաղաքային գրադարանի № 24, Վատիկանի գրադարանի լատինական ֆոնդի № 7806A, Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) № 1898 մատյանների բովանդակությունները և հնագրական յուրահատկությունները՝

Տիկին Նիելինի հրատարակած առաջին բնագիրը Վենետիկի Մարկոսյան գրադարանի № 20(265) ֆրանսերեն ձեռագրում պահպանվող ազգարանական ցանկն է (էջ 60–84), ուր տրվում է Իբելին ընտանիքի ձեռագրանունությունը՝ XIII դ. երկրորդ կեսից մինչև XIII դ. երրորդ տասնամյակը: Երկրորդ բնագիրը հիմքում վատիկանի № 4789 մատյանն է, ուր բերվում են Երուսաղեմի, Կիպրոսի, Հայոց թագավորների, Անտիոքի դուքսերի, Տրիպոլիի իշխանների, Իբելինների, Թարսիսյի, Սայետիայի, Կեսարիայի, Բեյրութի, Սեյտոնի, Մեյֆորտի, Թորոնի, Բեսանի, Ռոհայի, Ջիբլիի, Մարեկի, Մարզայի, Բուտրոնի, Ադելոնի, Մոզաստիոյի, Կայփայի և այլ իշխանությունների ազգատոհմերի նկարագրությունները (էջ 85–129): ՄՄ № 1898 ձեռագրում պահպանված ազգարանական ցանկը վերաբերում է Ռուբինյան ու Հեթումյան թագավորական տների, Երուսաղեմի և Կիպրոսի արքաների, Անտիոքի դքսության ազգարանությունները (էջ 131–147): Մյունխենի դալիկան № 771 ձեռագրից ընդօրինակված ազգարանական ցանկը պարունակում է Երուսաղեմի արքաների տիրոջը կրող իշխողների զավազանագիրքը (էջ 149–152)՝ սկսած Գոգֆրուա Բուլոնացուց մինչև Շառլոտ թագուհի (XV դ.): Վերջին բնագիրը հիմքում ընկած վատիկանի լատիներեն № 7806A մատյանը տալիս է Անդրծովյան ազգատոհմերի ցանկերը՝ սկսելով Երուսաղեմի առաջին թագավորներից, զրանք հասցնելով մինչև XV դ. երկրորդ կես (էջ 153–174): Հիշատակված ցանկերում բազմաթիվ վկայություններ կան հայկական իշխանական ընտանիքների և լատին խաչակիրների ամուսնական կապերի մասին:

Կիլիկիայի թագավորական ընտանիքի զավազանագրքի հնագույն լատինական ձեռագիրը (մոտ 1369) վատիկանի լատիներեն

րեն № 4789 մատյանն է, ուր Հայոց թագավորների ցանկը բերվում է Երուսաղեմի և Կիպրոսի թագավորների ազգաբանական ցանկերից հետո: Այդ բնագրական հատակոտորը հիշյալ ձեռագրում ընդօրինակված Երուսաղեմի Ասիկների 334 հատվածն է, որը անվանված է «Ce dit des rois de Ermenie. CCCXXXIII» (Այստեղ ասվում է Հայաստանի թագավորների մասին, 334): Հիշատակված հատվածում Կիլիկյան Հայաստանի իշխողների ցանկը սկսվում է Հինգերորդ իշխան Թորոս II Ռուբինյանից (1148–1169): Ազգաբանական այս ցանկում առկա են մի շարք անճշտություններ. օրինակ այստեղ ասվում է, թե Թորոս II իշխանը ժառանգ չի ունեցել կամ որ Թուբենը և Լևոնը իշխան Մլեհի որդիներն են, հեղինակը չգիտե Հեթում I-ի Ռուբեն որդուն և այլն: Հիշատակված անհամաձայնությունների հետ միասին հայերեն և լատիներեն բնագրերը գրեթե զուգահեռ են ընթանում, երբ հիշատակվում են միջպետական ամուսնությունները և թվարկվում են ժառանգների անունները:

Հայերենով պահպանված բնագրի (ՄՄ, ձեռ. № 1898) տեղանունները և անունները ներկայացնելիս տիկին Նիելինը հաճախ շեղվում է բնագրային ընթերցումներից, ինչը նվազեցնում է հրատարակված ֆրանսերեն թարգմանության արժեքը (թեպետ բնագրային ընթերցումները հաճախ տրվում են տողատակում): Օրինակ. հրատարակվող բնագրին անհարիր են Gurumze (ճիշտը՝ Կարմալգալ), Kastaravn (ճիշտը՝ Կաստաղալ), Anazarba (ճիշտը՝ Անարգաբա կամ Անավարգա), Trois Ares (ճիշտը՝ Իրազարկ), Edesse (ճիշտը՝ Ուռհա), Toron (ճիշտը՝ Դուրուն), Manyan (ճիշտը՝ Մանյոն) և այլն⁶: Երբեմն էլ տիկին Նիելինը սրբագրում է թարգմանված բնագիրը դրան խորթ անվանաձեւերով. օրինակ՝ Rupin (ճիշտը՝ Ռուբեն), Kakig (ճիշտը՝ Գագիկ), Adam (ճիշտը՝ Ատան) և այլն:

Ընդհանուր առմամբ տիկին Նիելինի հիմնականում հաջողվել է գտնել անձնանունների և տեղանունների ֆրանսերեն

⁶ Կիլիկյան տեղանունների ճշգրտման առումով հեղինակին ուղեցույց կարող էր լինել Ավստրիայի գիտությունների ակադեմիայի հրատարակած Kilikien und Isaurien von Fr. Hild und H. H e l l e n k e m p e r. Teil 1-2, Wien, 1990 (Tabula Imperii Byzantini 5) աշխատությունը:

ատուագործության բանալին, որը նրան տանայ պիարության թուշ է ավել նույնացունի սգվարանական արբեր ցանկերում հիշատակված անձնավորությունները: Հայերենում պահպանված բնագրի փրանսերեն թարգմանության ներգրավումով, անկասկած, նոր արժեք են ստացել Երուսաղեմի Ասիկներում պահպանված բնագրերը, թեպետ բերված բնագրերի հետազոտության բնագավառում դեռևս իրենց ասելիքն ունեն հայերենում պահպանված հիշատակարան-

ներն ու հիշատակագրությունները, որոնց հետ համեմատությունը օրվա խնդիրներից է: Տիկին Նիկոլեի աշխատասիրած հատորը արժեքավոր է ոչ միայն Կիլիկյան Հայաստանի պատմության հետազոտության տեսանկյունից, այլ նաև նորոյթ է հայ բնագրագիտության ասպարեզում: Հրատարակված բնագրերն անկրկին յիշարարարներ են հայկական և եվրոպական ազնվականական ընտանիքների ազգակցական կապերի բացահայտման բնագավառում:

Ա.ԶԱՏ ԲՈՋՈՅԱՆ